

Բայց նախ այդ բոլորը, կարծեմ թողատու պիտի ըլլաք որ քանի մը հակիրճ խօսքերով գործին *նիւթը* ներկայացնեն, յուսալով հանդերձ թէ ամէնքդ ալ ծանօթ էք անոր, բայց նաեւ յուսալով որ կան ոմանք՝ որ առիթը չեն ունեցած զայն վերծանելու:

Սեւան կղզին՝ համանուն լճին մէջ կը գտնուի՝ Հայաստանի հիւսիս-արեւելեան կողմը. հոն հիմա ալ ուխտատեղի մը կայ: Հազար տարի մը առաջ փոխադրուիլ պէտք է եղելութեան ներկայ ըլլալու համար: Նոյն ատեն՝ կղզւոյն մենաստանին մէջ կ'ապրին Վանահայրը, Աբեղան, Կոյրը, նաեւ կարգ մը միաբաններ՝ աղօթքի եւ ինքնագրկման մէջ, արհամարհելով *կեանքը* որ ծովակէն անդին կը վարէն մարդկային զանգուածները: Վանքը մօտ օրէն պիտի ունենայ իր հոյաշէն եկեղեցին՝ արդիւնք իշխանուհւոյ մը երկիւղած նուիրագործութեան եւ Վանահօր տեալապաշտ խանդին: Իշխանուհին կը բնակի լճակին հանդիպակաց եզրը:

Պատահար մը կը խռովէ վանքին խաղաղ մթնոլորտը եւ վճռական կ'ըլլայ Աբեղային համար: Իշխանուհւոյն իշխան եղբայրը եւ անոր աղջիկը՝ Սեդան լաստով մը վանք կուգան նորաշէն ժամը տեսնելու: Բայց շղթայագերծ մրրիկ մը ծովը կ'ոգեւորէ, ալիքները տաշեղի մը նման լաստը կը պտտցնեն ու Սեդան կը խլեն: Աբեղան՝ որ լաստին մէջն է, կը նետուի մրրկածուփ ալեաց մէջ ու կ'ազատէ զարմուհին...

Հոս եղերերգութիւնը կը սկսի: Աբեղան՝ Վանահօր մտածմանց եւ անշահախնդիր ներշնչումներուն նեցուկը, ընկերը, ճակատագրական սիրոյ մը մէջ կ'իյնայ: Զգացումներու հակադրութենէն կը տառապի ան, բայց չի կրնար Սեդային վրայ սեւեռելէ դադրիլ. ընդհակառակն աշխարհիկ սիրոյ տեսիլներով կը խելացնորի ու իր թշուառ սէրը կ'ուռճանայ: Նախ Սեդան կը տեսնէ՝ անպաճոյճ, գեղանի, հերարձակ. յետոյ կղզւոյն վրայ պտոյտի մը միջոցին հեթանոսութեան հին ոգիները, պարիկները, միգանուշները կը շրջապատեն զինք, կը խօսին իր հետ. հրապուրիչ են եւ շնորհագեղ... Երբ անոնցմէ կ'ազատի, ահա կը